

# ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

*Դոկտ. Էդ. Բաղդասարյան (Էդ. Գերմանիկ)*

## Նախաբան

Իր բազմադարյան պատմության ընթացքում գոյատևած, սոցիալական և ազգային ազատագրության, իր լավ ապագայի համար մաքառումների դաժան ուղի է անցել, օրհասական պահեր է ապրել հայ ժողովուրդը: Նա առանձնապես ծանր փորձության ենթարկվեց, մեծագույն ողբերգություն ապրեց առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի դժնդակ տարիներին:

Մեր սույն համառոտ ակնարկը ամփոփվում է հետևյալ գլուխներում.

- 1-Ովքեր են հայերը
- 2-Ովքեր են թուրքերը
- 3-Հայերի դերը օսմանական թուրքիայում
- 4- Հայկական կոտորածների պատմությունից
- 5- Մեծ եղեռն
- 6-Մեծ եղեռնի դրդապատճառներն ու պատասխանատուները
- 7-Հայկական վրեժխնդրության պատմությունից
- 8-Հայոց ցեղասպանության ճանաչման ընթացքը
- 9-Վերջաբան

## 1- Ովքեր են հայերը

Հայերը, որպես էթնիկական կազմավորում, առաջացել են հնդեվրոպական ընդհանրական լեզվի տրոհման հետևանքով: Եթե մինչև վերջերս հնդեվրոպական լեզվաընտանիքի հայրենիքը համարվել է կենտրոնական Եվրոպան, ապա ըստ նորագույն ուսումնասիրությունների այն տեղադրվում է Հայկական լեռնաշխարհում, նրան հարակից Հյուսիսային Միջագետքում, Փոքր Ասիայի արևելյան և Իրանական բարձրավանդակի հյուսիս արևմտյան մասերում: Այդ բնակավայրերում տակավին նոր քարի ( նեոլիթ-մթա 7-5 հազարամյակ ) դարաշրջանում կատարվել է հնդեվրոպական լեզվով խոսող ցեղերի տրոհումն առանձին լեզվաբարբառների, ապա ցեղակից լեզուների: Մարդաբանական ուսումնասիրությունների համաձայն, այդ ժամանակաշրջանից Հայկական լեռնաշխարհը բնակեցված է եղել արմենոիդ տիպին պատկանող ցեղերով: Այդ բնորոշ տիպի կրողը ներկայումս հայ ժողովուրդն է: Նեոլիթյան դարաշրջանից էնեոլիթին(պղնձաքար) անցման ժամանակաշրջանում( մ.թ.ա.5-4 հազարամյակը ներառյալ) հնդեվրոպական ցեղերի մի մասը տեղաշարժվելով Հայկական լեռնաշխարհից ու Փոքր Ասիայից տարածվել են Եվրոպա, Միջին Ասիա ու Հնդկաստան,մյուս մասը ( այդ թվում՝ խեթական, հայկական և իրանական ցեղերը) մնացել են նախահայրենիքի տարածքում: Այս բոլորը վկայում են հայերի տեղաբնիկության մասին:

## 2-Ուլքեր են թուրքերը

Թուրքական ցեղի ծագման պրոցեսի ժամանակագրական ելակետը, որը ի վերջո հանգեցրեց թուրք ժողովրդի կազմավորմանը, վստահորեն կարելի է համարել 11-րդ դարի վերջը, երբ սկսվել էր թրքական ցեղերի, գերազանցապես օղուզների և թուրքմենների զանգվածային գաղթը դեպի Փոքր Ասիա: Հետևաբար, թուրքերի ծագումը, թուրք ժողովրդի կազմավորումը տեղի է ունեցել ուշ միջնադարի շրջանում(12-15րդ դդ.), որը համեմատաբար լավ լուսաբանված է բանավոր աղբյուրներում: Ուրեմն թուրք ազգության կազմավորումն ավարտվել է 15-րդ դարում: Նրանք ձևավորվել են Միջին Ասիայից Փոքր Ասիա գաղթած 11-13րդ. թուրքական քոչվոր անասնապահական ցեղերի և տեղաբնիկների միախառնումից: Թուրքերի մի մասը (ուզեր,պեչենեզներ) Փոքր Ասիա է թափանցել Բալկաններից, ծուլել տեղացի մի շարք ժողովուրդների, ընդունել և յուրացրել նրանց նյութական և հոգևոր մշակույթի տարրերը: 13-րդ դ., խույս տալով մոնղոլական արշավանքներից, Միջին Ասիայից և Իրանից Անատոլիա թափանցեցին բազմաթիվ թուրքական (հիմնականում թուրքմեններ)և ուրիշ ցեղեր: 15-րդ դ. թուրքերը գրավեցին Փոքր Ասիան և միավորեցին թուրքական ցեղերը, տեղաբնիկների (հայեր, հույներ, արաբներ) մի մասը ոչնչացվեց, մնացածը ձուլվեց: 15-16րդ. թուրքերը չունեին միասնական ցեղանուն, դրան փոխարինում էր դավանական մուսուլման անվանումը:

Դեռևս 19-դ. 30-ական թթ. Թուրքիայում 7 միլիոն թուրքերից բացի բնակվում էին 2 մլն.-ից ավելի հայեր,մոտ 2 մլն. քրդեր, 1-1.5մլն. հույներ, ինչպես նաև աջարներ, հրեաներ,ալբանցիներ, բոսնիացիներ, խորվաթներ, որոնք կազմում էին բնակչության 45%-ը: Առ այսօր շարունակվում է համշենցիների ( մեծ մասամբ մահմեդականացած հայեր ) միաձուլումը: 20դ.սկզբին ձևավորվեց թուրքական ազգը: Էթնիկական ողջ ընթացքում նրանց մշակույթն ու լեզուն ներառել է հունական, հայկական, վրացական, բալկանյան ժողովուրդների լեզվական և մշակութային տարրեր: Թուրք ազգը ձևավորվելու համար հարկավոր էր մյուս ազգությունները ոչնչացվեին:

## 3-Հայերի դերը Օսմանական Թուրքիայում

Օսմանական պետության ստեղծումից հետո, հայերը մյուս ազգերի թվում մտան նրա լծի տակ և ունեցան իրենց յուրահատուկ դերը այդ կայսրության զանազան ասպարեզներում:Այժմ հարկ ենք համարում հպանցիկ ակնարկ ունենալ այդ կապակցությամբ:

Օսմանական պետության բարձրաստիճան իշխանությունները հայերն էին: Նրանցից կարելի է հիշատակել Ամիր Սեդրոսին, Ամիր Շնորհքին (1720թ. մի քանի հայկական դպրոց հիմնեցին Կ. Պոլսում) , Ամիր Ապրահամ (1824թ. հիմնեց առաջին տպարանը Թուրքիայում), Հովհաննես Դոզյան և Մկրտիչ Ջազայերլյան (մաքսատները բոլորովին նրանց էին հանձնված):

1795 թվականից ի վեր զինամթերքի շտեմարանի տնօրինությունը սերնդեսերունդ Տատյան ընտանիքին էր պատկանում:Թղթադրամի տպագրումը պատկանում էր Դոզյաններին ու (Հարություն) Բեզեճյաններին:

Երբ 1828թ. ռուսական զորքը մոտեցել էր Կ. Պոլսի դարպասներին և 15մլն.ռուբլի ավար էր պահանջում՝ Սուլթան Մահմուդը անճարակությամբ դիմում է Ամիր Բեզեճյանին , որովհետև պետությունը ի վիճակի չէր վճարելու, ուստի նա հոգում է

այդ գումարը: Նրա մահվան առիթով Սուլթանը խիստ հուզվելով, արքունական կազմով սև հագած մասնակցում է նրա հուղարկավորությանը:

Հովհաննես Տատյանը Բարձր Դռան կողմից նշանակվել էր թղթի, մետաքսի և պայթուցիկների գործարանների տնօրեն: (1856թ.) հետո նաև կաշվի, կտորի և մետաղի ձուլարանի տնօրեն:

Հնուց կայսրության շինարարական և ճարտարապետական աշխատանքները վստահվել էին Սարվարյաններին, հետո նաև Բալյաններին:

Այսուհանդերձ թուրքական իշխանությունը չէր ցանկանում բոլոր գործերը հանձնել հայերին, ուստի նրանց համար թուրք կառավարիչներ էր նշանակում, հատկապես բանակում և ներքին գործերի նախարարությունում:

Պետության գանձապահության պաշտոնը միշտ էլ հայերին էր տրվում, օրինակ՝ Հակոբ Քազաղյանը, Միքայել Պորթուգալյանը և Հովհաննես Սաքըրզ փաշան գանձապահության նախարարներ էին:

Գրիգոր Էֆենդին փոստի, հեռագրի և շինարարության նախարար էր նշանակվել 1864թ.:

Բժշկական և այլ համալսարանները հայերին էին վստահում (օրինակ Նիկողայոս Ռուսինյան, Անդրանիկ Խանդունյան, Ստեփան Ասլանյան, Թրեգյան, Միհրան Գարազաշ, Հակոբ Բոյաճյան):

Հաշվապահության հիմնադիրներն են եղել Կարապետ Խդրյանն ու Գոյունճյանը:

Առևտրի հիմնադիրները Ջուղայի հայ վաճառականներն են եղել:

Հարություն փաշա Տատյանը երկար ժամանակ արտգործնախարարության գործակատարն է եղել:

Արհեստներն ու առևտուրը մեծ մասամբ հայերին էր պատկանում, օրինակ՝ Կ. Պոլսի ոսկերիչների շուկան միանգամայն հայերի ձեռքում էր: Երկրի ներածումները՝ հույների, իսկ արտահանումները՝ հայերի մենաշնորհն էր:

Գեղարվեստի զանազան բնագավառներում հայկական դեմքերն էին փայլատակում, որոնց հիշատակելու համար մեծ համբերություն է պահանջվում :

Այսուհանդերձ թուրքերը իրականում չէին վստահում հայ տարրերին, օրինակ՝ երբ 1826թ. հայերը քսան նավերով հատուկ հանդիսությամբ սահմանադրությունը շնորհավորելու համար գնում են Կ. Պոլսի նահանգապետ Ալի փաշայի մոտ, վերջինս իր մերձականերին այսպես է արտահայտում.«Ես հայերից վախենում եմ, նրանք ծածուկ աշխատանք են տանում և մոտ հարաբերություն ունեն ժողովրդական մասսաների հետ և հեռու չեն գտնում այն պահը, երբ նրանք միանալով թուրք տարրերին, Օսմանական պետության դեմ ապստամբեն»:

## 4-Հայկական կոտորածների պատմությունից

Ինչպես քիչ առաջ անդրադառնանք, հայկական տարրի ոչնչացումը հատկապես սկսվել է 15դ.-ից, սակայն, երբ հայ ազատագրական պայքարը նոր կազմակերպված հիմքերի վրա դրվեց, և հայ ժողովուրդը ազգային զարթոնք ապրեց՝ հայկական կոտորածները կազմակերպված և ծրագրված կերպով նոր թափ ստացան հատկապես 19-դարի երկրորդ կեսից:

Ի նկատի ունենալով մեր խոսքի ժամանակի սահմանները, ստորև տալիս ենք հայկական կոտորածների նորագույն շրջանի ժամանակագրությունն ու կոտորածների թիվը.

No.	թվական	վայր	Քանակը (մարդ)
1	1860	Լիբանան	12,000
2	1876	Բուլգարիա	14,000
3	1877	Բայազետ	1,400
4	1879	Ալաշկերտ	1,250
5	1881	Ալեքսանդրիա	2,000
6	1892	Ներքին Թուրք.	3,500
7	1894	Սասուն	12,000
8	1895	Արևմտահայաստան	300,000
9	1846	Կոստանդնուպոլիս	9,570
10	1903	Մակեդոնիա	14,667
11	1904	Սասուն	5,640
12	1909	Կիլիկիա	30,000
13	1915	Թուրքիա և Արևմտահայաստան	1,500,000
14	1918	Կարս Արդանան	50,000
15	1918	Բաքու և շրջակայք	30,000
16	1919	Կիլիկիա և շրջակայք	60,000
17	1921	Յաճըն	20,000
18	1922	Զմյուռնիա	10,000
Ընդամենը (1860թ.- 1922թ.)			2,284,027

(New York times, Աշխարհի ահաբեկչությունները և կոտորածները: Էջ396)

## 5- Մեծ եղեռն

Արևմտահայության Ֆիզիկական բնաջնջման իր հրեշավոր ծրագրերը թուրքական բռնակալությունը մշակել է դեռևս անցյալ դարի վերջերին: Սակայն այդ քաղաքականությունն ավելի լայն չափերով իրագործվեց երիտթուրքերի կառավարման տարիներին:

Դեռ 1914թ. աշնանը և 1915թ. սկզբներին թուրքական իշխանություններն սկսեցին հատվածաբար ոչնչացնել բանակ զորակոչված հայերին, ապա նաև ճանապարհների վրա աշխատեցնելու պատրվակով զորահավաքի ենթարկված 15-20 և 45-60 տարեկան տղամարդկանց: Օգտագործելով պատերազմական իրադրությունը, իթթիհատականները 1915թ. սկզբներին կայացած իրենց կուսակցության կենտկոմի գաղտնի նիստում որոշեցին արևմտահայության բնաջնջման և տեղահանության կոնկրետ եղանակները:

Թալեաթի նախագահությամբ գումարված գաղտնի նիստում, որին մասնակցում էին Էնվերը, Նազըմը, Բեհաեդդին Շաքիրը և ուրիշներ, հանդես գալով որպես հիմնական գեկուցող կոմիտեի քարտուղար Նազըմը կոչ էր անում չբավարարվել Ադանայի կոտորածի նման մասնակի ջարդերով. «Պետք է հայ ազգը արմատախիլ լինի, մեր հողի վրա մի անհատ անգամ չմնա, հայ անունը մոռացվի: Հիմա պատերազմի մեջ ենք, սրանից հարմար առիթ չի գտնվի, մեծ պետությունների միջամտությունը և թերթերի բողոքի ձայնը նկատելի իսկ չի կարող լինի, լինելու պարագային խնդիրը կատարված մի իրողություն կդառնա և կփակվի, այս անգամվա

գործողությունը բնաջնջումի մի գործողություն պիտի լինի, մի հայ անհատ իսկ չմնալու պայմանով բնաջնջումը անհրաժեշտ է»:

Այսպես, ապրիլի 15-ին տեղական իշխանություններին թալեաթի, էնվերի, և Նազընի ստորագրությամբ գաղտնի հրաման ուղարկվեց, որտեղ ասված էր, թե օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, անհրաժեշտ է վերջնականապես բնաջնջել հայերին՝ նրանց քշելով դեպի Արաբիայի անապատները:

Դահիճները առաջին հերթին հաշվեհարդար տեսան հայ ականավոր գործիչների ու մտավորականների, այդ թվում մեջլիսի հայ պատգամավորների հետ: Միայն Կ. Պոլսում ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերն ոստիկանությունը ձերբակալեց 235 անվանի հայ մտավորականների: Շուտով ձերբակալվածների թիվը հասավ շուրջ 800-ի, որոնք քվեցին դեպի Անատոլիայի խորքերը և գազանաբար սպանվեցին աքսորի ճանապարհին: Կ. Պոլսի նահատակված հայ մտավորականների թվում էին Գ. Ջոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռ. Ջարդարյանը, Ռ. Սևակը, Յովհ. Թլկատինցին, Յրանդը, Երուխանը և շատ շատ ուրիշներ: Հանճարեղ Կոմիտասը պատահաբար փրկվելով մահից և ականատես լինելով հայ ժողովրդի մեծագույն այդ ողբերգությանը՝ կորցրեց բանականությունը:

Երիտթուրքերի կառավարությունը 1915թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի սուլթան Բայազիտի հրապարակում կախաղան բարձրացրեց հնչակյան կուսակցության 20 ղեկավարների (Փարամազ, դոկտ. Պենե, Վանիկ, Ա. Աչքապաշյան և այլն):

Թալիաթի ստորագրությամբ մի գաղտնի կարգադրություն է հղվում վիլայեթների իշխանություններին, ուր ասվում էր, որ բնաջնջել անհրաժեշտ է Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ողջ հայ ազգաբնակչությունը. «Կառավարությունը իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չխնայել անգամ օրորոցի երեխաներին»:

Տեղական իշխանությունները մեծագույն ճշտությամբ էին կատարում թալեաթի բոլոր կարգադրությունները: Այսպես 1915թ. ապրիլ-մայիսին տեղահան արվեցին Կիլիկիայի հայերը, հունիս-հուլիսին՝ Կարինի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Սվազի, օգոստոս-սեպտեմբերին՝ Անկարայի, Ադաբազարի, Բրուսայի, Ջեբել Մուսայի, ՈւրՖայի և Այնթապի հայերը:

Հայերի աքսորը դեպի Դեյր-էզ-Ջոր (աղավաղված՝ Տեր Ջոր) քաղաքի շրջակա տոթակեզ անապատը և զանգվածային ջարդը միևնույն եղանակով և միաժամանակ իրականացվեց Թուրքիայի ավելի քան 50 վայրերում:

Աքսորից առաջ տղամարդկանց բաժանում էին ընտանիքներից ու ոչնչացնում: Գեղեցիկ կանանց ու աղջիկներին բռնի կերպով առանձնացնում էին՝ մեծահարուստ թուրքերի հարամներն ուղարկելու համար: Ապա սովահար հոծ զանգվածներին քշում էին Անատոլիայի լեռնաքնքներով, կիզիչ արևի ճառագայթների տակ՝ դեպի միջագետքի անապատները: Հազարավոր հայեր ճանապարհին մահանում էին սովից, ծարավից, ուժասպառությունից: Նրանք՝ ովքեր այլևս անկարող էին առաջ շարժվել, անմիջապես սվինահարվում էին:

Այս աքսորյալներից շատ քչերն էին տեղ հասնում. օրինակ՝ Սեբաստիայից և Խարբերդից աքսորված 18000 հայերից աքսորավայր են հասել 150 կին և երեխա. Հալեպից Ռես-յուլ Այն և Մերսենի ճանապարհով աքսորված 20000 հայերից կենդանի մնացին 5000 հոգի: Կարինի վիլայեթի 215000 հայ ազգաբնակչությունից կենդանի մնացին ընդամենը 2000, իսկ Կարին քաղաքի 18000 հայերից՝ 120 մարդ:

Հայկական կոտորածներն ոչ միայն տեղի էին ունենում հայկական վիլայեթներում ու Թրակիայում և այլ տեղերում բնակվող հայերի նկատմամբ:

Հայերին գլխովին չաքսորեցին միայն երկու քաղաքներից՝ Կ. Պոլսից ու Չնյունհայից:

Այսպիսով, 1915- 1918 թթ ընթացքում երիտթուրքական կառավարության կողմից ձեռնարկված հայաջինջ գործողությունների հետևանքով մոտ երկու միլիոն հայեր աքսորվեցին, որոնցից մեկ ու կես միլիոնից ավելին սպանվեց կամ զոհ գնաց սովին ու համաճարակին Միջագետքի անապատներում: Բռնի թուրքացման ենթարկվեցին շուրջ 200000 հայեր, գերազանցապես կանայք ու երեխաներ:

Երտթուրքերը զազանային եղանակով «լուծեցին» հայկական հարցը: Մեծ եղեռնից հետո արյունարբու թալեաթ փաշան պաշտոնապես հայտարարեց՝ «չկա այլևս հայկական հարց, քանի որ չկան նաև հայեր»:

1916թ. Լոնդոնում հայկական հարցի կապակցությամբ տեղի ունեցած բանակցություններին հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի առաջարկը՝ կոտորածներից ազատված հայ տարագիրներից Արևելյան լեզեոն ստեղծելու մասին, հավանություն գտավ Ֆրանսիայի (Ժորժ Պիկո) և Անգլիայի (Մայքըլ Սայքս) կողմից:

1916թ. նոյեմբերի 28-ին Ֆրանսիայի կառավարությունը որոշեց հայ տարագիրներից կազմավորել այդ լեզեոնը: Այդ լեզեոնի ընդհանուր թիվը 1918թ. մայիսին կազմում էր 5662 զինվոր, որից 400-ն էին սիրիացիներ, մնացածը հայեր էին: Նրանք առաջին անգամ պատերազմական գործողություններին մասնակցեցին միայն 1918թ. սեպտեմբերի 19-ին Պաղեստինի ճակատում:

Հնչակյանների, ռամկավարների և դաշնակ-ցականների ղեկավարները հուսադրվելով իմպերիալիստական Ֆրանսիայի պետական գործիչների խաբեբա ճառերից, 1920թ. օգոստոսի 3-ին Ադանայի մոտակայքում, յուրաքանչյուրը առանձին-առանձին «Միջագետքի հանրապետություն» հռչակեցին, իսկ Ադանայում օգոստոսի 4-ին Միհրան Տամատյանի նախագահած Ազգային գերագույն խորհուրդը «Ֆրանսիական հովանավորության տակ ինքնավար Հայաստան հռչակեց»: Այդ հանրապետություններից երկուսը առաջին իսկ օրը, իսկ երրորդը՝ երրորդ օրը վերացվեցին Ֆրանսիական զորամասերի կողմից:

Սկսված անգլո-Ֆրանսիական հակասությունների պայմաններում Ֆրանսիան հակվեց դեպի թուրքիան: 1921թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում Ֆրանսիայի և Քենալական թուրքիայի միջև կնքվեց պայմանագիր, որով Ֆրանսիան իր զորքերը հեռացրեց Կիլիկիայից: Այսպիսով ինչ որ իթթիահատականներին չհաջողվեց անել Մեծ եղեռնի օրերին, հինգ տարուց հետո հաջողվեց կատարել քենալականներին: Այդ երկրորդ ցեղասպանությունը, որին զոհ գնացին 30000-ից ավելի կիլիկիահայեր, այս անգամ կատարվեց մեծ պետությունների թողտվությամբ: Կիլիկիան ևս դատարկվեց հայությունից:

## 6-Մեծ եղեռնի դրդապատճառներն ու պատասխանատուները

Մեծ եղեռնի առաջացման գլխավոր պատճառները կարելի է ամփոփել հետևյալ կերպով.

1-Թուրքական ազգի ձևավորման պրոցեսի անբաժանելի մասն էր կազմում հայերի ուժացումն ու ոչնչացումը:

2-Եվրոպայի իմպերիալիստական պետությունների համար առիթ էր ծառայում «հայկական հարցն» ու հայերի գոյությունը թուրքական իշխանության տերիտորիայում, որով նրանք կարողանում էին միջամտել թուրք պետության գործերին: Կոտորածների ծրագրի շնորհիվ միանգամայն վերանում էր այդ հարցը:

3-Հայկական գլխավոր կոտորածները ծրագրվեցին մասոնական կազմակերպությունների միջոցով, որպեսզի հայերի ոչնչացումով հրեաների ամենամեծ տնտեսական մրցակիցը կանգ առնի գոյություն ունենալ: Հայտնի է, որ թե օսմանական ժամանակաշրջանի , և թե իթթիհատական և քենալական ղեկավարները կամ ծագումով մասոնական հրեաներ էին, և կամ թուրք մասոնականներ ( օրինակ՝ Թալեթ փաշան, Քենալ Աթաթուրքը, փրինս Ահմադ քենալ էդդին Էֆենդի և Նուրեդդին Էֆենդի՝ Սուլթան Աբդուլ Մաջիդի զավակները, Մուսթաֆա Ռաշիդ փաշա, օսմանական վարչապետ և այլն):

4-Հայերը և հայ ազատագրական պայքարը մեծ խոչնդոտ էին համարվում պանթուրքական զավթողական ծրագրերի իրականացման դեմ, որի իսկական հրահրողներն էին Գերմանիան, Անգլիան և Ֆրանսիան (իհարկե տարբեր ժամանակաշրջաններում). Հայկական ազատագրական պայքարն ու արևմտահայերը առհասակ ռուսական հակում ունեին, որը չէր համընկնում արևմտյան երկրների շահերին:

5-Օսմանական նախկին երկրների անկախացումը (Բուլգարիա, Հունաստան և բալկաններ) այդ պետությանը պարտադրեց ուշադրություն դարձնել արևելյան սահմաններին և ճնշել հայկական շարժումները:

6-Հայկական անհեռատես և արկածախնդրական զինյալ գործողությունները:

Հայկական կոտորածների իսկական պատասխա-մատուները հետևյալներն են.

1-Գերմանական, Ավստրո-հունգարական, Անգլիական, Ֆրանսիական և Ցարական պետությունները:

2-Համաշխարհային գաղտնի կազմակերպությունները, որոնց ճիրանների մեջ են գտնվում իմպերիալիստական պետությունները:

3-Օսմանական, իթթիհատական և քենալական պետությունները:

1919թ. մարտի 8-ին սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդդինի (1918-1922) հատուկ հրամանով, երիտթուրքական կուսակցական պարագլուխներն ու նախարարները հանձնվում են Կ.Պոլսի ռազմական արտակարգ ատյանի քննությանը: Այս դատաքննությունների ընթացքում հեռակա կարգով մեղադրվում են 10 իսկ դատավարությանը ներկա 20 կուսակցական և պետական բարձրաստիճան գործիչներ:

Հիեռակա կարգով դատի տրված մեղադրյալներն էին.

1-Թալեթ փաշա - ներքին գործ. նախարար, մեծ վեզիր (1917-1918):

2-Էնվեր փաշա - ռազմական նախարար

3-Ջենալ փաշա- ծովային

4-Բեհաեդդին Շաքիր Բեյ- երիտ.թուրք.կուսակցության կլ անդամ «Թեշքիլաթ-ը Մախսուսե»-ի նախագահ

5-Պոկտ. Նազըմ Բեյ- կուսակց. կլ անդամ, հանրակրթական նախարար:

6-Ջավիդ բեյ- Ֆինանսների նախարար:

7-Սուլեյման Էլբիստանի բեյ- հողագործության առևտրի նախարար ( 1915-1917):

8-Մուստաֆա Շերեֆ բեյ- հողագործության և առևտրի նախարար:

9-Օսկան Էֆենդի- փոստի և հեռագրատան նախարար (1914-1917):

10-Դոկտ. Ռուզուլի Էֆենդի- կուսակց. կլ անդամ:

11-Ազիզ Էֆենդի- հասարակական անվտանգության նախարար:

## 7-Հայկական վրեժխնդրության պատմությունից

Հայոց մեծ եղեռնի թուրք կազմակերպիչները գերծ չմնացին հայերի վրեժխնդրությունից և հայկական գնդակների թիրախը դարձան ըստ հետևյալի.

1-Էնվեր փաշան 1922թ. Թաշքենդում սպանվեց հայազգի Աղաբեգովի ձեռքով:

2-Ջենալ փաշան 1922թ. Թիֆլիսում Պետրոս Տ.Պողոսյանի և Արտաշես Գևորգյանի միջոցով:

3-Խան Խոյսկին՝Ադրբեջանի վարչապետը1920թ. Արամ Երկանյանի ձեռքով:

4-Աբբաս Բեգովը 1920թ. Երկանյանի ձեռքով:

5-Թալեաթ փաշան 1921թ. մարտի 21-ին Բերլինում Սողոմոն Թեհլիրյանի ձեռքով:

6-Սաիդ Հալիմ փաշան 1921 դեկտ. 6-ին Հռոմում Արշավիր Շիրակյանի ձեռքով:

7-Բեհա էդդին Շաքիր բեյը 1922թ. ապրիլի 17-ին Բերլինում Արամ Երկանյանի ձեռքով:

8-Ազիմ փաշան 1922թ. ապրիլի 17-ին Բերլինում Արշավիր Շիրակյանի ձեռքով:

9-Բեհբուտխան Ջիվանշիրը՝ Ադրբեջանի ներք. գործ. նախարարը, 1931թ. հուլիսի 19-ին Կ.Պոլսում Միսակ Թորլակյանի ձեռքով:

## 8-Հայոց ցեղասպանութեան ճանաչման ընթացքը

### 8-1- Անմիջական արձագանքներ

Հայոց ցեղասպանութիւնը յիշատակել ու ամրագրել է բազմաթիւ փաստաթղթերում: Այսպէս, 1915 թ. մայիսի 24-ի Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի եւ Ռուսաստանի համատեղ հռչակարգում արձա-նագրում է, որ ապրիլի կեսերին մի շարք բնակա-վայրերում կոտորածներ են տեղի ունեցել, իսկ Օսմանեան կայսրութեան կառավարութիւնը մի շարք քայլեր է ձեռնարկել կայսրութեան հայ բնակչութեան դէմ: Հաշի առնելով մարդկութեան եւ քաղաքա-կրթութեան դէմ Թուրքիայի հանցագործութիւնները, Եռեակ միութեան կառավարութիւնները յայտարարում են Թուրքիայի ղեկավարութեանը, բոլոր հանցա-գործութիւնների համար պատասխանատու են Օսման կայսրութեան կառավարութեան բոլոր անդամները եւ բոլոր նրանց ներկայացուցիչները, որոնք անմիջա-կանօրէն մասնակցել են այդ ջարդերին:

1915 թ. փետրուարի 9-ին ԱՄՆ Սենատը բանաձեւ է ընդունել, որում, հաշի առնելով, որ պատերազմի մէջ ներգրաւած երկրներում մի քանի հարիւր հազար հայեր պարէնի, կացարանի եւ հագուստի կարիք ունեն, կոչ է անում ԱՄՆ նախագահին մէկ օր յայտարարել, երբ ԱՄՆ քաղաքացիները կարող են իրենց համակրանքն արտայայտել եւ մարտնչող երկրներում հայերին օգնելու համար միջոցներ տրամադրել: Բանաձեւի մէջ նշուում է, որ հայերի մեծ մասը մարտական գործողութիւնների պատճառով հարկադրւած էր թողնել տները, հնարաւորութիւն չունի պարէն եւ տարրական կարիքների բաւարարման համար այլ անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերել, նշուում է սովի, հիւանդութիւնների մասին:

1920 թ. մայիսի 11-ին ԱՄՆ –ի Սենատը, ճանաչելով Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը, նշում է, որ «հստակ վեր է անկախութիւնը հայ ժողովրդի դէմ իրագործւած զանգւածային կոտորածի եւ այլ հանցագործութիւնների վերաբերեալ»:

## 8-2- Պաշտօնական ճանաչումներ

1. Ուրուգւայի Արելելեան Հանրապետութեան Սենատի եւ Ներկայացուցիչների միացեալ գլխաւոր ասամբլեայում 1965 թ. ապրիլի 20-ին ընդունել է «Հայ նահատակների յիշատակի օրւայ մասին» օրէնք:

2. 1982 թ. ապրիլի 29-ին Կիպրոսի Ներկայացուցիչների պալատը 1915 թ. հայերի ցեղասպանութեան տարելիցի կապակցութեամբ դատա-պարտում է այն ժամանակւայ թուրքական ռեժիմի կազմակերպած ցեղասպանութիւնը՝ որակելով որպէս հայ ժողովրդի դէմ հանցագործութիւն, եւ պաշտ-պանում է հայ ժողովրդի խախտւած իրաւունքների լրիւ վերականգնումը:

3. 1987 թ. յունիսի 18-ին ընդունած իր բանաձեւում Եւրախորհրդարանը ճանաչել է 1915-17 թթ. Օսմանեան կայսրութիւնում հայերի ցեղասպանութեան, փաստը եւ Եւրոպայի խորհրդից պահանջել ճնշում գործադրել Թուրքիայի կառավարութեան վրայ՝ 1915-17 թթ. հայերի ցեղասպանութիւնը ճանաչելու նպատակով: Խորհրդարանն ընդունում է, որ ներկայիս Թուրքիան չի կարող պատասխանատութիւն կրել Օսմանեան կայսրութիւնում հայերի դէմ հանցա-գործութիւնների համար: Ուստի ընդգծւում է, որ ցեղասպանութեան փաստի ճանաչման հետեւանքով չեն կարող բխել ներկայիս Թուրքիային ուղղւած ոչ քաղաքական, ոչ իրաւական եւ ոչ էլ նիւթական հաւակնութիւններ:

4. Ռդ Պետդուման 1995 թ. ապրիլի 14-ին ընդունել է 1915-22 թթ. հայ ժողովրդի ցեղասպանութիւնը դատա-պարտող յայտարարութիւն, որում դատապարտելով 1915-22 թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին, իր կարեկցանքն է յայտնել հայ ժողովրդին եւ ապրիլի 24-ը համարել եղեռնի զոհերի յիշատակի օր:

5. Կանադայի խորհրդարանի համայնքների պալատը 1996 թ. բանաձեւ է ընդունել, որում արձանագրւում է 1915 թ. ապրիլի 24 տեղ գտած մէկուկէս միլի-ոն մարդկանց սպանութիւնը:

6. 1996 թ. ապրիլի 25-ին Յունաստանի Հանրա-պետութեան խորհրդարանը որոշում է կայացրել ապրիլի 24-ը համարել «Թուրքիայի կողմից 1915 թ. Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր»:

7. 1997 թ. ապրիլի 3-ին Լիբանանի Հանրա-պետութեան Ազգային ժողովն ընդունել է բանաձեւ, որով ապրիլի 24-ը հռչակել է «Հայ ժողովրդի դէմ

գործադրված ջարդերի արհաւիրքի յիշատակի օր»։ Բանաձեւը լիբանանցի ժողովրդին՝ ապրիլի 24-ը հայ ժողովրդի հետ միասնականութեան օր յայտարարելու կոչ է ուղղում։ Իսկ 2000 թ. մայիսի 11-ին Լիբանանի խորհրդարանը միաձայն ընդունել է հետեւեալ բանաձեւը «Լիբանանի խորհրդարանը 1915 թ. իրականացած հայերի ցեղասպանութեան 85- ամեակի առիթով ճանաչում եւ դատապարտում է օսմանեան իշխանութիւնների կողմից մէկուկէս միլիոն հայերի նկատմամբ իրագործւած ցեղասպանութիւնը։ Խորհրդարանն իր լիակատար աջակցութիւնն է յայտնում հայ քաղաքացիների պահանջատի-րութեանը եւ գտնում է, որ հայերի ցեղասպանութեան միջազգային ճանաչումը կենսական պայման է՝ ապագայում նմանօրինակ ոճիրների կանխարգելման համար»։

8. Աւստրալիայի նոր Զարաւային Ուելիս նահանգի խորհրդարանը 1997 թ. ապրիլի 17-ին ընդունել է բանաձեւ, որում ընդառաջելով տեղի հայ համայնքի ցանկութիւններին, դատապարտել է Օսմանեան կայսրութեան տարածքում կատարւած ոտնձգութիւնները՝ որակելով դրանք որպէս 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւն, ապրիլի 24-ը յայտարարել է հայ զոհերի յիշատակի օր եւ հայերի ցեղասպանութիւնը պաշտօնապէս դատապարտելու կոչ է արել Աւստրալիայի կառավարութեանը։

9. 1998 թ. մարտին Բելգիայի Սենատը ընդունել է բանաձեւ 1915 թ. Թուրքիայի կողմից Զայոց ցեղասպանութեան իրականացումը ճանաչելու մասին, խնդրելով Թուրքիայի կառավարութեանը նոյնպէս ճանաչել այն։

10. Ամերիկեան 10 նահանգներ՝ Կոնեկտիկուտ, Միչիգան, Նիւ Ջերսի, Վիրջինիա, Զիւսիսային Կարոլինա, Նիւ Եորք, Մասաչուսեթս, Կալիֆորնիա, Ջորջիա, Զարաւային Կարոլինա, ճանաչել են Զայոց մեծ եղեռնը։

11. 1993 թ. մայիսի 5-ին Արգենտինայի Սենատը բանաձեւ է ընդունել, որում իր համերաշխութիւնն է յայտնում հայ համայնքին, որը 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան զոհ է դարձել, նորից նշում է մարդկութեան դէմ հանցագործութիւնների տարելիցը, որի գագաթնակէտը դարձաւ 1915-17 թթ. Թուրքիայի կառավարութեան կողմից կազմակերպւած 1.5 մլն հայերի սպանութիւնը։

12. Սենատը նաեւ իր խոր անհանգստութիւնն է յայտնել ԼՂԻՄ մեծամասնութեան դէմ մարդու իրաւունքների խախտումների կապակցութեամբ։

13. 1998 թ. ապրիլի 16-ին Բուենոս- Այրեսի օրենսդիր մարմինը հռչակագիր է ընդունել, որում իր համերաշխութիւնն է յայտնել արգենտինահայ համայնքին՝ Օսմանեան կայսրութեան կողմից իրականացւած 1,5 մլն-ից աւելի հայերի ցեղասպանութեան 1998 թ. ապրիլի 24-ին նշուող 83-ամեայ տարելիցի առթիւ։ 1998 թ. ապրիլի 22-ին Արգենտինայի Սենատն ընդունել է մի յայտարարութիւն, որով դատապարտում է բոլոր տեսակի ցեղասպանութիւնները՝ որպէս մարդկութեան դէմ գործւած ոճիրներ։ Նոյն յայտարարութեան մէջ Սենատն իր համերաշխութիւնն է արտայայտում նախապաշարումների եւ անհանդուրժողականութեան զոհ դարձած բոլոր ազգային փոքրամասնութիւններին, յատկապէս ընդգծելով իր մտահոգութիւնը դեռեւս անպատիժ մնացած ոճիրների վերաբերեալ։

14. Իտալիայի 35 քաղաքներ, նահանգներ, շրջաններ արդէն պաշտօնապէս ընդունել են Զայոց ցեղասպանութիւնը։ Նախատեսւում է, որ Զոռմի

նահանգային խորհուրդը նույնպես առաջի-կայուն կընդունի համապատասխան օրենք:

15.Քրդական վտարանդի պառլամենտը, որը գտնուում է Բրիւսելում, հռչակագիր է ընդունել հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչելու մասին:

16.2000թ. նոյեմբերի 8-ին Ֆրանսիայի սենատը 164 կողմ,40 դէմ, և 4 ձեռնպահ քվեներով ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը:

17.2000թ. նոյեմբերի 17-ին Իտալիայի խորհրդարանը գերակշիռ մեծամասնութեամբ ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը:

18.2004 թ. Ապրիլի 21-ին Կանադայի խորհրդարանը 153 թեր, 68 դէմ եւ 8 ձեռնպահ քվեներով պաշտօնապէս ճանաչեց Հայեց ցեղասպանութիւնը:

19.2004 թ. Մայիսի 31-ին, ԱՄՆ-ի Վերմոնտի նահանգի նահանգապետ Ջեյմս Դուզլասը հրապարակել է հռչակագիր, որում նշված է Թուրքիայում հայերի ցեղասպանության 89-րդ տարեդարձը: Վերմոնտը դարձել է 37-րդ նահանգը, որը ճանաչել է հայերի ցեղասպանությունը:

### 8-3- Յայտարարութիւններ ցեղասպանութեան համատեքստում ու ցեղասպանութեան շուրջ

Հայոց ցեղասպանութեան խնդիրն իր տեղն է գտել նաեւ 1948 թ. մայիսի 28-ի ՄԱԿ-ի զինւորական հանցագործութիւնների հարցերով յանձնաժողովի, ինչպէս նաեւ 1985 թ. յուլիսի 2-ի խտրականութեան կանխման եւ ազգային փոքրամասնութիւնների պաշտպանութեան հարցերով ՄԱԿ-ի ենթայանձ-նաժողովի զեկուցումներում: Մասնաւորապէս, վերջին զեկուցման 13-րդ կէտը վերաբերում էր Օսմանեան Թուրքիայում հայերի իրաւունքների խախտումներին: 1983 թ. յուլիսի 24-ից մինչեւ օգոստոսի 10-ը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 6-րդ ասամբլեայի ընթացքում հրապարակւած պաշտօ-նական զեկույցում նշուում է, որ Թուրքիայում մէկուկէս միլիոն հայերի ողբերգական բնաջնջման, ինչպէս նաեւ իրենց պատմական հայրենիքից կէս միլիոն հայերի տեղահանութեան շուրջ համաշխարհային հանրութեան լռութիւնը պայմաններ է ստեղծում պատմական փաստերի իսկութիւնը հերքելու, համար, ինչը հանգեցնում է հայ ժողովրդի, հայոց եկեղեցիների եւ շատ այլ կազմակերպութիւնների յարաճուն դժգոհութեանը: Հայոց ցեղասպանութեան խնդիրը 1997 թ. յունիսի 13-ին քննել է նաեւ Ցեղասպանութեան ուսումնասիրութեան ընկերակցութիւնը, ըստ որի գնահատման, 1915 թ. ցեղասպանութիւնը համա-պատասխանում է Ցեղասպանութեան կանխար-գելման եւ պատժման ՄԱԿ-ի կոնւենցիայի չափա-նիշներին:

1975 թ. ապրիլի 8-ին ԱՄՆ Կոնգրեսի Ներկա-յացուցիչների պալատը բանաձեւ է ընդունել, ըստ որի նոյն թւականի ապրիլի 24-ը յայտարարել է մարդու նկատմամբ մարդու անմարդկային վերաբերմունքի յիշատակի համազգային օր, եւ դիմել է ԱՄՆ նախագահին յայտարարութեամբ հանդէս գալու կոչով, որում վերջինս կը յորդորի այդ օրն ընկալել իբրեւ ցեղասպանութեան բոլոր զոհերի, մասնա-ւորապէս, 1915 թ. ցեղասպանութեանը ենթարկւած հա-յերի յիշատակի օր:

1984 թ. սեպտեմբերի 10-ին Ներկայացուցիչների պալատը 1985 թ. ապրիլի 24-ը մարդու նկատմամբ մարդու անմարդկային վերաբերմունքի յիշատակի համազգային

օր յայտարարելու մասին բանաձեւ է ընդունել՝ ի յիշատակի 1915- 23 թթ. Թուրքիայում իրականացւած ցեղասպանութեան զոհ դարձած մէկուկէս միլիոն հայերի:

1996 թ. յունիսի 11-ին ԱՄՆ Կոնգրեսի Ներ-կայացուցիչների պալատը օրէնք է ընդունել ԱՄՆ արտաքին Ֆինանսաւորման մասին, որի 547 կէտը սահմանափակումներ է վերապահում Թուրքիային յատկացուող օգնութեան վրայ «22 միլիոն ոչ աւելի արտաքին Ֆինանսաւորման Ֆոնդի միջոցներից հասանելի կը լինեն Թուրքիայի կառավարութեան համար բացառութեամբ այն դէպքերի, երբ Ֆեդերալ ղեկավարութիւնը կոնկրետ որոշում կընդունի կամ այն դէպքում, եթէ Թուրքիայի կառավարութիւնը, միանալով ԱՄՆ-ին, կը ճանաչի 1915-23 թթ. Օսմանեան կայսրութիւնում հայերի դէմ կատարւած հանցա-գործութիւնները, բոլոր անհրաժեշտ քայլերը կը ձեռնարկի հայերի ցեղասպանութեան զոհերի յիշատակը յարգելու ուղղութեամբ»:

1996 թ. ապրիլի 23-ին Կանադայի համայնքների պալատը բանաձեւ է ընդունել հայ ժողովրդի ողբերգութեան 81-րդ տարելիցի առթիւ, ըստ որի ապրիլի 20-27-ը յայտարարել էլ այսուհետ նշելու է որպէս մարդկանց հանդէպ անմարդկային վերաբեր-մունքի յիշատակի շաբաթ:

Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի 51 անդամներ 1998 թ. ապրիլի 24-ին, արտայայտելով իրենց անձնական կարծիքը, ընդունել են գրաւոր հռչակագիր, որում նշում է, որ 1915 թ. ապրիլի 24-ը սկիզբը դրեց Օսմանեան կայսրութիւնում հայերի ոչնչացման պլանի իրագործմանը: Հռչակագրով նշում է 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան տարելիցը, որով տուրք է մատուցում ընդդէմ այս հանցա-գործութեան հայ զոհերի յիշատակին: Հարկ է նշել, որ հռչակագիրը ստորագրողների թւում է եւս ԽՎ ներկայիս նախագահ լորդ Ռասել Ջոնսթոնը:

Ըստ մամուլի լուրերի, Քենթրբերիի արքեպիսկոպոս-սը Կիլիկոյ կաթողիկոս Արամ Ա-ի երաշխավորու-թեամբ մտադիր է Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Լորդերի պալատին օրինագիծ ներկայացնել ցեղաս-պանութեան ճանաչման մասին: Լորդերի պալատի 400 անդամներից 25-ը եպիսկոպոսներ են:

Հայոց ցեղասպանութեան խնդիրն իր տեղն է գտել ամերիկեան պրեզիդենտների ամենամեայ ելոյթներ-րում. Ռոնալդ Ռեյգանը 1981 թ. ապրիլի 22-ին նշել է, որ թէ՛ աւելի վաղ տեղի ունեցած Հայոց ցեղաս-պանութիւնը, թէ՛ ցեղասպանութիւնը Կամբոջեայում, ինչպէս նաեւ Հոլոքոսթի դասերը երբեք չպէտք է մոռացնեն: 1978 թ. մայիսի 16-ին ԱՄՆ-ի հայերի պատւին տրւած ընդունելութեան ժամանակ ԱՄՆ նախագահ Ջիմի Քարտերը, նշելով, որ մինչեւ 1916 թականը կոնկրետ քայլեր էին ձեռնարկուում հայ ժողովրդին ոչնչացնելու ուղղութեամբ, եւ որ այդ դէպքերը մեծագոյն ողբերգութիւններից են, ընդգծել է, որ այդ հարցով միւրմբերգեան դատավարութիւն չի եղել: 1990 թ. ապրիլի 20-ին Ջորջ Բուշը նշել է, որ հայ ժողովրդին վիճակել են բազմաթիւ ողբերգութիւններ, սակայն ամենից տխուր իրադարձութիւնը 1915-23 թթ. Օսմանեան կայսրութեան ղեկավարութեան կազմա-կերպած սարսափելի կոտորածն էր: 1994- 2000 թթ. նախագահները ամէն տարի յայտարարութիւններ են արել ապրիլի 24-ի կապակցութեամբ՝ ցեղաս-պանութիւնը բնորոշելով որպէս տեղահանութիւն եւ զանգւածային ջարդեր:

Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանը 1984 թ. յունւարի 6-ին Վիէն քաղաքի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը յայտարարել է, որ հնարաւոր չէ պատկերացնել ցեղասպանութեան բոլոր սարսափները:

Ժողովուրդի մշտական տրիբունալը, քննելով Հայոց ցեղասպանութեան խնդիրը, 1984 թ. ապրիլի 16-ին դատավճիռ է կայացրել, որում մասնաւորապէս նշում է, որ Թուրքիայի ոչ մի կառավարութիւն պատաս-խանատութիւն չի ստանձնել 1915 թ.

ցեղասպանական իրադարձությունների համար: Տրիբունալը պնդում է, որ ցեղասպանութեան մեղադրանքը հետազոտւի եւ ապացուցւելու դէպքում՝ ճանաչւի համաշխարհային հանրութեան կողմից:

Ըստ տրիբունալի, 1915 թ. դէպքերը ցեղասպանութիւն որակաւորմանն են համապատասխանում: Երիտթուրքերի կառավարութիւնը մեղաւոր է ցեղասպանութեան իրականացման համար: Հայերի ցեղասպանութիւնը ճանաչւում է որպէս միջազգային հանցագործութիւն, որի համար պատասխանատուութիւն պէտք է կրի թուրքական պետութիւնը:

## 9-Վերջաբան

Այսպիսով արևմտահայ ժողովուրդը կորցրեց իր Ֆիզիկական գոյութիւնը, իր գույքն ու ունեցւածքը, իր ազգային արժանիքները, իր հայրենիքը, ոչնչացման ենթարկւեցին 66 քաղաքների ու 2500 գյուղերի հայ ազգաբնակչութիւնը, կողոպտւեցին ու քանդւեցին ավելի քան 2000 եկեղեցիներ ու վանքեր, 1500 դպրոցներ ու վարժարաններ: Օսմանյան Կայսրութիւնում միայն հայ ժողովրդին հասցւած նյութական վնասը 1919թ. կուրսով կազմել է մոտ 15 միլիարդ Ֆրանկ:

Առաջին նամաշխարհային պատերազմի ավարտից հետո համաշխարհային հասարակութեան կողմից բողոքներ տեղի ունեցան, նրանց թվում էին՝ Ֆրանսիացի հնագետ-պատմաբան Ժակ դը Մորգանը, Գերմանացի հայագետ Յոզեֆ Մարկվարտը, Յոհան Լեփսիուսը, Արմին Վեգները, Անտուան Մեյեն, Ֆրեդր. Մակլերը, Արնոլդ Թոյնբին, Վալերի Բրյուսուվը, Հենրի Մորգնտաուն և շատ ուրիշներ:

Ով իմ զոհված հայ նահատակներ, ե՞րբ պիտի, նույնիսկ ձեր հոգին, ազատվի դարաշրջանի նենգութիւններից:

Հարգանք Ձեր անմահ հիշատակին: